Հայաստանը Համաշխարհային Քարտեզագրության Մեջ:

Հեղինակ՝ Ռուբեն Գալչյան: Համատեղ հայերեն և ռուսերեն լեզուներով:
ISBN 1-99941-957-4-3, 2371 էջ,. 310x280 մմ: Գիրքը պարունակում է Նախաբան, Պատմական ակնարկ, 167 քարտեզ իրենց բացատրություններով, Բառարան, Անվանացանկ և Բիբլիոգրաֆիա:

<u>Մի քանի խոսք «Հայաստանը համաշխահային քարտեզագորթյան մեջ» հատորի մասին:</u>

Քարտեզագրության և հատկապես Հայաստանի մասին սկսել եմ նյութեր հավաքել և հետազոտություններ կատարել սկսած 1970 թվականից: Անցյալ երեք տարիների ընթացքում սկսեցի հավաքածս նյութերն ի մի բերել և դասակարգել, որի արդյունքը ներկա հատորն է: Գիրքս սկզբում լույս տեսավ անգլերենով, իսկ այս տարբերկաը, ավելի ընդլայնված և ահվե;լյալ քարտեզներով լույս է տեսել հայերեն և ռուսերեն լեզուներով:

Գիրքս պատրաստել եմ՝ նկատի ունենալով մի քանի կարևոր հանգամանքներ, որոնք այս օրերիս ունեն նաև քաղաքական կարևորություն, քանի որ առնչվում են Հայաստանի ու Արցախի ապագային վերաբերող բանակցություններին և ընդհանրապես հայ ժողովրդի հայրենիք կոչվող Հայաստանին:

Վերջին տարիներին թուրք և ազերի «պատմաբաններն» ու «գիտնականները» սկսել են ավելի բացահայտ կերպով արտահատվել թե իբր, հայերը Կովկասի ու Փոքր Ասիայի բնիկներ չեն՝ այլ պարզապես եկվորներ: Թուրք դասախոսները զեկույցներ են կարդում Թուրքիայի «հնագույն» պատմության ու մշակույթի մասին, առանց հիշելու Հայ անունն ու Հայաստանը, որի տարածքը նրանք գրավել են: Մյուս կողմից՝ ադրբեջանցի «պատմաբաններն» աշխատում են փաստել, որ հայերը Կովկասում գոյություն չեն ունեցել մինչև 19-րդ դարը, այլ քոչել են Կովկաս ռուսական զորքերի միջոցով: Եթէ այս համոզմունքով նայենք խնդրին, ապա հայերն ընդհարապես այդ տարածաշրջանում գոյություն չեն ունեցել: Եթէ իրապես այդպես է, ապա ինչպե՞ս բացատրել բոլոր հին աշխարհագետների ու քարտեզագետների բացատրած ու պատկերած «Հայաստան»ը:

Գրքիս մէջ օգտագործելով օտար աշխարհագրական ու քարտեզագրական աղբյուրներ, գալիս եմ փաստելու թուրք-ադրբեջանական տեսության ճիշտ հակառակը: Փաստորեն՝ ըստ քարտեզների, Հայաստանը գոյություն է ունեցել աւելի քան 2600 տարի, մինչդեռ Թուրքիա անվանումը քարտեզների մէջ երևան է գալիս ամենավաղը 14-րդ դարի կեսերին: Հետաքրքրականն այն է, որ Վրաստանը որպես երկիր նույնպես չի նշվել մինչև 16-րդ դարը: Մինչ այդ Վրաստանի շրջանում նշված են Կոլխիս, Իբերիա և Մենգրելիա երկրները (Կողքիս, Վիրք և Մեգրելիա): Գալով Ադրբեջանին, ապա խնդիրն ավելի բարդ է, այս մասին տեսեք ստորև բերված 3-րդ պարբերությունը:

Գրքիս մէջ վերատպված է աշխարհի կարևորագույն քարտեզագետների գործերի ընտրանին, որը վերաբերում է Հայաստանի աշխարհագրական տարածքին: Դրանց մեջ կան հին հունական, հռոմեական, վաղ քրիստոնեական, իսլամական, վաղ և ուշ միջնադարյան քարտեզներ, ինչպես նաև արևմտյան քարտեզագրության կարևոր դեմքերի աշխատանքներից: Այստեղ կան նաև հայերենով հրատարակված արժեքավոր քարտեզների նմուշներ և այլ հետաքրքրաշարժ քարտեզներ՝ ընդհուպ մինչև Հայաստանի արբանյակային լուսանկարը:

Գրքումս վերատպված բոլոր քարտեզներին կից կան մանրամասն բացատրություններ նրանց հեղինակի, գծագրվելու թվականի, հրատարակչի ու աղբյուրների, ինչպես նաև քարտեզի յուրահատկությունների վերաբերյալ: Որոշ դեպքերում, երբ քարտեզը պատրաստված է արաբերենով, արաբատառ օսմաներենով կամ պարսկերենով, աշխատել եմ քարտեզում նշված կարևոր տեղեկությունները թարգմանել, որպեսզի կարդացողը տեղյակ դառնա քարտեզագետի պատկերացմանը և նրա հաղորդած տեղեկություններին:

Գրքում վերատպված քարտեզների բնօրինակներն այսօր գտնվում են աշխարհի տարբեր գրադարաններում ու թանգարաններում, իսկ մի փոքր մասը իմ անձնական հավաքածուից է

վերցված: Բրիտանական Գրադարանը, Ուաշինգտոնի Կոնգրեսի Գրադարանը, ԱՄՆ-ի Ուալտերզ Գալլերին, Մանչեստերի Համալսարանի գրադարանը, Օքսֆորդի Բոդլեյան գրադարանը, Մյունխենի, Վիեննայի, Բոլոնիայի, Ֆլորենցիայի քաղաքային գրադարանները, Փարիզի Ազգային գրադարանը, Վատիկանի գրադարանը, Երևանի պետական գրադարանը և Մատենադարանը այն գրադարաններն են որոնցից օգտվել եմ գիրքս ստեղծելու համար:

Գրքում աշխատել եմ պարզաբանել մի քանի հույժ կարևոր խնդիրներ և բացատրություններ տալ դրանց վերաբերյալ, ինչպես նաև հաղորդել հետաքրքրական այլ տեղեկություններ այդ թվում հետևեալները:

1 – Որտե՞ղ է գտնվում Հայաստանը օտար քարտեզագետների տեսակետից և ո՞ր ժամանակաշրջանից է նրա գոյությունը դարձել փաստ: Աշխարհի առաջին քարտեզը, որը Բաբելոնյան կավէ մի սալիկ է, պատրաստված մեր թվարկությունից 600 տարի առաջ, ցույց է տալիս ծովերով շրջապատված աշխարհը,: Սալիկի սեպագիր բացատրությունները՝ ըստ բրիտանացի մասնագետների ասում են, որ աշխարհի կենտրոնում նշված երեք երկիրներն են Ասորեստանը, Բաբելոնը և Հայաստանը (Արարատը):

2- Հին հունական քարտեզները և Պտղոմեոսի «Աշխարհագրություն» գործն ու նրա քարտեզները, որոնք հիմք ծառայում արևմտյան քարտեզագրության համար, բոլորը նշում են Հայաստան երկիրը՝ սկսած դեռ նախաքրիստոնեական շրջաններից: Պտղոմեոսյան քարտեզներում Հայաստանը բաղկացած է Մեծ և Փոքր Հայքերից, ուր նշված են նրանց ավելի քան 160 քաղաքները: Այս քարտեզները գործածվել են սկսած երկրորդ դարից մինչև 17-րդ դարը: Նույն քարտեզագրության մեջ Վրաստանը որպես երկիր առաջին անգամ երևում է 16-րդ դարում, իսկ այսօրվա Ադրբեջանի Հանրապետությունն ընդհանրապես չկա, քանի որ այդ երկրամասը այդպես է անվանվել միմիայն 1918 թվականին:

Պտղոմեոսյան քարտեզ, 1482: Մեծ և Փոքր Հայքերը

3 – Ո՞րն է Ադրբեջան կոչվող երկիրն և որտե՞ղ է գտնվում: Այսօրվա Ադրբեջանի Հանրապետություն կոչվող երկիրը այդ անունը ստացել է միայն 1918 թվականին, իսկ դրանից առաջ այդ շրջանը կոչվում էր Շիրվան, Թալիշ, Դաղստան և այլն, որոնք բոլորը պատմական Աղվանքից մնացած երկրամասեր են: Աղվանք կամ Կովկասյան Ալբանիա անվանումը անհետացել է 9-11րդ դարերից սկսած, բայց Ադրբեջան երկրամասը իրականում Պարսկաստանի հյուսիս արևմտյան նահանգի անունն է, որն այդպես է կոչվել շուրջ 2000 տարի և գտնվել է Արաքս գետի հարավում, այսօրվա Իրանի տարածքում: Այս վայրի Ադրբեջան անվանումը մի քաղաքական խաղ էր՝ պատրաստված Պան-թուրքիզմը ծրագրողների կողմից, որոնք աշխատում էին թրքական ցեղերի գոտի կազմել Թուրքիայից մինչև Միջին Ասիա: Իրական Ադրբեջանի շրջանը ցուցադրված է գրքի բոլոր քարտեզներում, ներառյալ բոլոր իսլամական քարտեզներում, որոնք գծագրված են օտար քարտեզագետների ձեռքով:



Դե Լիլ, 1730 – Հայաստանի տարածքը

4- Պարզաբանել, թէ ըստ իսլամական քարտեզների, ինչպես նաև ըստ օսմանյան և արաբական աշխարհագրական գրքերի ո՞ր քաղաքներն ու շրջաններն էին պատկանում Հայաստանին:

Քարտեզներին նայելով պարզվում է, որ Վանը, Արճեշը, Բիթլիսը, Խլաթը, Մանազկերտը, Էրզրումը և այլն եղել են Հայաստանի քաղաքներ: Դրանց մասին մանրամասնություններ տրված են իսլամական և



Իսթախրի – 10րդ դար: Ադրբեջանը, Աղվանքը և Հայաստանը



Օսմանյան քարտեզ, 1803: Օսմանյան Կայսրությունը՝ որտեղ նշված է նաև Հայաստանի տարածքը

օսմանյան աշխարհագրական ձեռագրերում: Օսմանյան քարտեզներում Հայաստանի անվանումը գոյություն ունի նույնիսկ մինչև 1860 թվականները, բայց այդ ժամանակից սկսած օսմանյան փաստաթղթերում պատմական «Հայաստան» անունն աստիճանաբար փոքրանում է և ապա ընդհանրապես անհետանում՝ տեղի տալով «Արևելյան Անատոլիա» անվանը, որը բառացիորեն նշանակում է «արևելյան արևելք»: Այս կապակցությամբ հետաքրքիր է տեսնել օսմանյան 4 քարտեզ, որոնք նշում են Հայաստան անունը այսօրվա Թուրքիայի արևելյան տարածքում (տե՛ս գրքի թիվ 108, 109, 116, 116a, 116b, 116c և 119 քարտեզները):

5- Միջնադարյան քրիստոնեական քարտեզագրությունը աշխարհը պատկերում էր որպես մի տարածք, որը շրջապատված է ծովերով՝ կենտրոնում ունենալով Երուսաղեմը: Այս պարզ քարտեզներում ևս միշտ նշվում են Հայաստանն ու Արարատը, Նոյյան Տապանով և Եփրատ, Տիգրիս ու Արաքս գետերով:

Սաղմոսային քարտեզ, 1250: Աշխարհացույց

6- Պորտոլան կոչվող ծովային քարտեզներում, որոնք պատրաստվում էին հատկապես ծովագնացների ու նավավարների գործածության համար, ընդհանրապես ցուցանշվում են նավահանգիստներն ու ծովափնյա քաղաքները: Հետաքրքրականն այն է, որ ըստ այդ ավանդության, Հայաստանը՝ ծովափ չունենալով ընդհանրապես չպիտի նշվեր պորտոլաններում, մինչդեռ սրանց մեծամասնության մեջ հաճախ նշված է Հայաստանը՝ ներառյալ Արարատները, Հայկական բարձրավանդակը, Արաքս, Եփրատ, Տիգրիս գետերնը, Երզնկա ու Մալաթիա քաղաքները: Արարատների գագաթին նստած պատկերված է նաև Նոյյան Տապանը: «Հայաստան» անունը թերևս ծանոթ է եղել

(տե՛ս հաջորդ էջի քարտեզը)

իտալացի, իսպանացի ու այլ քարտեզագետներին որպես միակ արևելյան քրիստոնյա պետությունը, կամ էլ նրանք այդ երկրին ծանոթացել են հայ առևտրականների միջոցով, որոնք ճամփորդում էին Եւրոպայի տարբեր առևտրական կենտրոններում և զբաղվում վաճառականությամբ:

Պորտոլան աշխարհացույց քարտեզ - 1450

7- 16-19րդ դարերի եվրոպական քարտեզագրության մէջ Հայաստանը միշտ նշված է, բայց ոչ որպես անկախ երկիր, այլ ներառնված Պարսկական, Օսմանյան, հետագայում նաև Ռուսական կայսրությունների սահմաններում, բայց և այնպես Հայաստան անվանումը անպայման կա: (Տե՛ս ստորև երկու քարտեզները)



Օրտելիուս, 1595- Ալեքսանդր Մեծի գրաված երկրները

Ուեյգել, 1718 – Հայաստանը

8- Այստեղ վերատպված են նաև քսաներորդ դարի պատմական կարևորություն ունեցող Հայաստանի քարտեզներ, ինչպիսիք են Փարիզի Խաղաղության կոնֆերանսի համար պատրաստված և Սևրի դաշնագրի քարտեզները, այս վերջինը կրում է ԱՄՆ-ի նախագահ Ուիլսոնի ստորագրությունը:

Նպատակիս հասնելու համար գրքում վերատպել եմ 127 քարտեզ և շուրջ 40 հավելյալ դետալներ:
Այստեղ կա նաև քարտեզագրության համառոտ պատմությունը, ինչպես նաև աշխարհագրական անունների համառոտ բառարան:



Հայաստանը՝ դիտված արբանյակից

Գիրքը տպագրվել է Հայաստանում Պրինտինֆո հարտարակչության կողմից:
Ստանալու համար կարող եք դիմել Երևան, Աբովյան փող, Արթ Բրիջ գրախանութ, կամ հեղինակից rgalichian@talktalk.net **էլեկտրոնային փոսիտ հասցեով:**

Ռուբեն Գալչյան - Երևան, 2005